

Փետրվարի 19-ը՝ գիրք նվիրելու օր

Փետրվարի 19-ին Հայաստանի ազգային գրադարանում նշվեց գիրք նվիրելու օրը: Թամանյանական մասնաշենքի մուտքի մոտ ցուցադրված գրականությունը գրավեց անցորդների, հատկապես ուսանողների ուշադրությունը: Նվիրաբերվեց մասնագիտական, գեղարվեստական, գիտահանրամատչելի գրականություն:

Գրադարանի մի խումբ աշխատակիցներ այցելեցին Երևանի Մանուկ Աբեղյանի անվան թիվ 3 ավագ դպրոց և գրականություն նվիրեցին դպրոցի գրադարանին: Դպրոցը պատահական չէր ընտրված: Այս տարի լրանում է գրականագետ, լեզվաբան Մանուկ Աբեղյանի ծննդյան 150-ամյակը: Ազգային գրադարանին գրականություն նվիրեց VivaCell MTS ընկերության կորպորատիվ գրադարանի գրադարանավար Արևիկ Տեր-Կարապետյանը, ինչպես նաև Ազգային գրադարանի չինական անկյանը նվիրաբերվեց գրականություն հայ-չինական մշակույթի և գիտության կենտրոնի կողմից: